ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Մայիսի 30-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոն Կապանում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 33 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր քսաներեք, աշխատանքի տեղավորման՝ յոթ, պետպատվերի շրջանակներում բուժում իրականացնելու հարցով՝ երեք քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից քսաներկուսին տրվել է դրական լուծում, մեկ դիմում ուսումնասիրման փուլում է: Ընթացք է տրվել պետպատվերի շրջանակներում բուժումն իրականացնելու մասին դիմումներին: Աշխատանքի ընդունվելու մասին դիմած յոթ քաղաքացիները վերցվել են հաշվառման:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ